

Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ, Մաճր երկեր, Լոս Անջելես, 1987. ԺԴ. 972 էջ:

Մինչև այժմ Հակոբ Անասյանը հայտնի էր առավելապես «Հայկական մատենագիտություն»-ով՝ ԵՄՀ գրական կոթողային անավարտ գործի երկու հատորով (Երևան, 1959, 1976)։ Կապան նշանավոր չէ նաև նրա «XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում» աշխատությունը (Երևան, 1961), որ մեր պատմագիտության վերջին շրջանի կարևոր նվաճումներից է։ Ի վերջո, ընթերցողը գիտի նաև նրա մյուս գրքերը։ «Հայկական աղբյուրները Քուրդանդիայի անկման մասին» (Երևան, 1957), «Ցուվհաննէս Կամենացի, Պատմաթիւն պատերազմին Խաթիւն» (Երևան, 1964), ուսերեն և անգլերեն՝ «Հայկական հարցը և հայոց ցեղասպանությունը Թուրքիայում» (ուսերեն՝ գրականության համառոտ մատենագիտություն (Լոս Անջելես, 1983)։

Հայտնի էր նաև, որ Հ. Անասյանը 1932 թ. ի վեր Հայաստանի և Սփյուռքի մամուլում արդարելի է համառոտ կամ ընդարձակ տասնյակ հոդվածներ ու հետազոտություններ, շենք վերջիններս են, որ հեղինակը ժողովել, դասավորել և, Ալեք Մանուկյան մշակութային հիմնադրամի հովանավորությամբ ու լա Վեռնի Ամերիկահայ միջազգային կոլեջի հրատարակությամբ, տպագրել է «Մանր երկեր» խորագրով, լավ ձևավորված ու մաքուր տպագրված մեծադիր մի հատորի մեջ, նա գիտակցաբար չի վերահրատարակել իր հայերեն հետազոտությունների օտարալեզու տարբերակները, իսկ միայն օտար լեզվով տպագրվածները բերել է հայերեն քննադրումով։ Հատորից դուրս են մնացել նաև մեր մատենագիրների (Նզդիշ, Քուրդանդ, Արիստակես Լաստիվերցի, Մխիթար Գոշ, Կիրակոս Գանձակեցի, Կոստանդին Նրզնկացի) երկերի երևանյան գիտական ու թարգմանական հրատարակությունների մեջ տեղադրված՝ Անասյանի կազմած մատենագիտությունները։ Միով բանիվ, Հ. Անասյանի հետազոտությունները փնտրելու համար ընթերցողն այլևս հարկ չունի թերթերու 1932—1986 թթ. աշխարհասփյուռ հայ մամուլի բազմաթիվ և բազմապիսի միավորները։ առանձին ստուգումների համար կարելի է գիմել լա Վեռնի Ամերիկահայ միջազգային կոլեջի հրատարակած «Հակոբ Սեդրակի Անասյան» կենսամատենագիտությունը (Լոս Անջելես, 1984. 117 էջ)։ Այստեղ, ի դեպ, պատշաճ մատենագիտական հղումներով, ժողովված են նաև Հ. Անասյանի գիտական գործունեությանը տարբեր ժամանակներում և տարբեր առիթներով՝ հայ և օտարազգի տասնյակ հայագետների տված գնահատականները (էջ 35—37), նաև՝ գիտնականի 80-ամյա հոբելյանի առիթով գրված ողջույնի խոսքեր (էջ 99—117)։ Հայագետը, նրա անմնացորդ նվիրումն ու մեծ վաստակն ըստ արժանիության գնահատված են նաև այս գրքույկի մեջ գետնիցված՝ Երվանդ Գալստյանի «Հ. Ս. Անասյանի կյանքն ու գործը» հոդվածում (էջ 9—25)։ Նրա ժառանգությանը նվիրված ամփոփ վերլուծում է նաև «Մանր երկեր» ներածությունը՝ «Հակոբ Ս. Անասյանի հայագիտական վաստակը» (էջ Ա—ԺԴ)*, որ հեղինակել է Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ավետիս Սանճյանը։ Այս ամենը մեզ հնարավորություն է տալիս խուսափելու բազմիցս ասված դրվատական գնահատականները կրկնելու հարկազրանքից, ըստ այդմ էլ ներկա շարադրանքի հիմնական նպատակը համարում ենք «Մանր երկեր» հատորի ունեցած նյութը և այս ստվար գրքով հայագիտության ստացած դուրսություններն ու հետևյալները ներկայացնելը։

Առաջին յոթ գործը հեղինակի աստվածաշնչագիտական հետազոտություններն են, որոնք տարբերվելով հանդերձ «Հայկական մատենագիտության» (Բ, էջ 308—667) «Աստվածաշնչի մատյանի» հայկական քննադրած ծավալուն մասից, մեզ համար ունեն թե՛ տեղեկատվի արժեք և թե՛ դասագրքային նշանակություն։ Հայերեն Աստվածաշնչի մասին պատկերացում ստանալու, նրա որևէ գրքի բերանդիրը կազմելու ցանկություն ունեցողն առանց այս աշխատությունների հիմնավոր յու-

րակած «Հակոբ Սեդրակի Անասյան» կենսամատենագիտությունը (Լոս Անջելես, 1984. 117 էջ)։ Այստեղ, ի դեպ, պատշաճ մատենագիտական հղումներով, ժողովված են նաև Հ. Անասյանի գիտական գործունեությանը տարբեր ժամանակներում և տարբեր առիթներով՝ հայ և օտարազգի տասնյակ հայագետների տված գնահատականները (էջ 35—37), նաև՝ գիտնականի 80-ամյա հոբելյանի առիթով գրված ողջույնի խոսքեր (էջ 99—117)։ Հայագետը, նրա անմնացորդ նվիրումն ու մեծ վաստակն ըստ արժանիության գնահատված են նաև այս գրքույկի մեջ գետնիցված՝ Երվանդ Գալստյանի «Հ. Ս. Անասյանի կյանքն ու գործը» հոդվածում (էջ 9—25)։ Նրա ժառանգությանը նվիրված ամփոփ վերլուծում է նաև «Մանր երկեր» ներածությունը՝ «Հակոբ Ս. Անասյանի հայագիտական վաստակը» (էջ Ա—ԺԴ)*, որ հեղինակել է Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ավետիս Սանճյանը։ Այս ամենը մեզ հնարավորություն է տալիս խուսափելու բազմիցս ասված դրվատական գնահատականները կրկնելու հարկազրանքից, ըստ այդմ էլ ներկա շարադրանքի հիմնական նպատակը համարում ենք «Մանր երկեր» հատորի ունեցած նյութը և այս ստվար գրքով հայագիտության ստացած դուրսություններն ու հետևյալները ներկայացնելը։

* Այսուհետև հիշատակվող միավորների խորագրերի մոտ, առանց էջ բառը գրելու, նշանակելու ենք գրախոսվող ժողովածուի էջահամարները։

բացման արևելքային անկյունի կարող էր լինել Գրանք են. «Առաքելադրության մատյանի հայկական բնագիրը» (1—40), «Էջմիածնի տպարանի սուրբ-գրքային հրատարակությունները և Ս. Գրքի քննական հրատարակության հարցեր» (41—59), «Միմաքյան մի տարրերը ծածկող Աստվածաբանի հայերեն գրադրություն» (147—150), «Բնագրային մի ճշտում ծղկկիցի գրքի հայերեն թարգմանության մեջ» (151—156), «Աստվածաբանի մատյանի՝ անվավերականները հայ մատենագրության մեջ» (157—173), «Ավանդականագրություն» (175—177), Իրավագիտության սուրբգրական այս շարքի մեջ է նաև «Հայ-համարարական գրականությունը և հայ մատենագրություն համարարական» (61—145) ծավալուն ուսումնասիրությունը, որ առանց լատինականության կարող է լինել մեր համալսարանի պատմաբան և բանասեր ուսանողներին մասնագիտացված «ատուկ մի դասընթացի կառավարչական հիմք» Անկասկած, «Հայկական մատենագիտության» նույնաբանությամբ հատկանշների հետ միասին, համալսարանական մի այլ ծավալուն դասընթացի հիմք էլ կարող են լինել Անասյանի սուրբգրական գործերը:

Աղբյուրաբան-ձեռագրագետի ուսումնասիրությունների հերթորդ խումբը (էջ 179—317) նվիրված է Վարդան Այգեկցուն, որի մեծարժեք գիրքը հաստատության և արմատ հալածության երկի հայտնաբերումը մեկն է Անասյանի հայագիտական տասնյակ գյուտերից: Հաջորդաբար դրված այս հետազոտությունները (թվով՝ 10) հեղինակին քաջ առ քաջ մոտենցում էին «Հայ պատմա-գրականության գրականության թանկարժեք հուշարձանի» հիմնադր. ուսումնասիրման և կատարյալ գիտական հրատարակության իր ծրագրած նպատակին: Պարզ մի օրինակով փորձենք պատկերել, թե ինչպիսի հիմնավորությամբ էր Անասյանն ուսումնասիրում այս ժողովածուն. «Երկնականություն», խոսվածք (Չամչյան) Ներսես Պալանկյանի գլխավորությամբ 1341 թ. Ավինյոնում կազմվել և Բենեդիկտոս ԺԲ պապին է ներկայացվել հայ եկեղեցու «մոլորություններ» մասին պատմող մի գրքուկ, որն ըստ իր ժամանակի մեկնում թվարկված են «հայոց մոլորական գրքերը», որոնցից մեկն է Hanao-dar-mat k'at Anadotrimat, այսինքն՝ Վարդան Այգեկցու Արմատ հավատուն Այս փոքրիկ փաստը բավական էր, որպեսզի Անասյանը հիմնավորապես ուսումնասիրի ամբողջականությունների այդ կետը, բազմաթիվ օժանդակ նյութերով պարզի նրա մեջ թվարկված ռուր գրքերը և դրանով իսկ մեծապես

նպաստի XIV դարի կիլիկյան Հայաստանի քաղաքական-եկեղեցական պատմության կոն-ճիտների պարզման գործին:

Հավասարմատը նույնպես, ցավոք, կրկին անավարտ մնաց: Սակայն արվածն ավելի քան բավարար է, որպեսզի երիտասարդ և շնորհալի որևէ հայագետ նույն ծրագրով շարունակի գործը և մի օր ավարտի հասցնի մեծ գիտնականի նախագծած հոյակապ կառույցը: Էջմիածնի Մայր աթոռ՝ ի դեմս Ամենայն Հայոց կաթողիկոսի, որ այդ գործի պատվիրատուն էր և որ հեղինակի մահից հետո ստացել է նրա թողոնի՝ «Արմատ հալածություն» վերաբերող մասը, պետք է անպայման հոգա այս անշափ կարճոր գործը շարունակելու խնդիրը: Անշուշտ, այսօր գրեթե անհնար է գրտնել մի մասնագետ, որ ունենար Հ. Անասյանի պատրաստությունն ու իմացությունները և կարողանար նույն մակարդակով ու ձևով համար-թյամբ շարունակել աշխատանքը, բայց, առաջնորդվելով արվածով, հնարավոր է պատշաճ ձևով ավարտել այն:

Աշխատությունների հաջորդ՝ շաբի զարնվող խումբը վերաբերում է Հ. Անասյանի հանրահայտ «XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում» հիմնարար աշխատության չըջողծին: Այստեղ է մեր պատմության այդ կարևոր էջի հայտնաբերման ուղղությամբ հեղինակի կատարած առաջին քայլը՝ «Նպաստ մը հայոց ազատագրության պատմության. մահտեսի Եհմուրատ Բաղիշեցի և Հովհաննես Թուրունջի» (493—499), որ գիտնականի երախայրիքներից է («Երկուսն ալ մասնադիր, 1934, Ժ—ԺԲ, էջ 94—100), նաև՝ հաջորդը. «Թուրքական տիրապետությանը Հայաստանում XVII դարում» (501—517), ի վերջո՝ երրորդը. «Հայ-հունական ազատագրական շարժման մի էջ Կանդիայի պատերազմի շրջանում» (519—532): Սակայն այս խնդրին վերաբերող հաջորդ երկու նյութը՝ «XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (Պաշտպանական նյութ)՝ դիսսերտացիայի հրապարակային պաշտպանության առթիվ» (533—552) և «Երկու Լույսի մի գոկոթականի քննարկման առթիվ» (553—579), գրված լինելով գեոեո 1962 և 1974 թթ. նրանում, «Մանր երկերի» մեջ տպագրվել են առաջին անգամ: Սրանց արժեքը պակաս կարևոր չէ նաև մեր ազգային գիտության ապագա նվիրյալներին գիտական ճշմարիտ սկզբունքներով դաստիարակելու իմաստով: Ի դեպ, նույնպիսի արժեք ունի նաև «Տոմարագետ Ազարիա Զուգայեցին և Հայկական խորհրդային հանրագիտարանը» (667—670) նորա-

տիպ նամակը (գրված 1973 թ. հունվարին)։ Անասյանի դիտողականության, մտքի ճկունության, իմացությունների հարստության և առաջադրած նպատակին հասնելու նախանձելի համառության մի փայլուն դրսևորում է թուրքական ֆութբոլիստը և հայերը (Թուրքիայի ձուլողական քաղաքականության պատմությունից) (581—620) ծավալուն գործը (առաջին տպ.՝ «Հանդես ամսօրյա», 1979)։ Անկասկած, սկզբում մշակելիս է եղել իր «Մատենադարանի» առաջին ժողովրդի Ուրախ Կարենցի» բառահոգովը. սրա ընթացքում պետք էր ներկայացնել նաև այդ հեղինակի «Մեկնություն տեսական ցուցանիս» յաղագս նեոին գործը (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 9121, Թ. 33 ա—72 ա)։ Հենց այստեղ էլ խորաթափանց մասնագետը հեղինակի մանվածապատ, խրթին տողերի մեջ նկատել է երկվույթը (շատերն անիմաստ գլխացավանք կը համարեն), հետևողական և համառ փնտրությունը կատարել և հայտնաբերել հայ իրականությանը և ժողովրդին պարտադրված իրողությունը՝ իրանականից ծագող թուրքական ֆութբոլիստի լայն արձագանքները և մեծաքանակ զրականության օգնությամբ պարզել է Կարենցի հեղինակի շարադրանքի բոլոր ծալքերը, Կարենի և ողջ արևմտահայության կյանքում մահմանական ծիսակրոնական երանգ ունեցող արհեստակցական համաքրությունների վարած կեղծելի ա հայակեր քաղաքականության բերած ծանր հետևանքները։ Ի վերջո՝ նույնպիսի հետևողականությամբ ու բարեխղճությամբ պարզել է, որ Ուրախ Գրիգորի աշխատությունը բազում նոր տարրերով ու մանրամասներով լրացնում է ֆութբոլիստի վերաբերյալ թուրքական աղբյուրների ունեցած տեղեկությունները, ավելի կատարյալ դարձնում նրա մասին եղած պատկերացումները։

Նույն՝ թուրքական տիրապետության ծանր դրսևորումների ու Կարեն XVIII դարի պատմության մանրամասների ճշգրտման է նվիրված նաև «Բազմասար Կարենցու մի յիշատակարանը (1758—1761 թթ.)» հրապարակումը (621—626), որ մեզ պետք է դրդի շարունակելու սկսվածը և ուսումնասիրությամբ հանդերձ լույս ընծայելու նույն դրչի պատմական արժեք ունեցող մյուս հիշատակարանները։ Փանիցս օգտագործված աղբյուրի առաջին և խնամքոտ հրատարակություն է նաև «Գրիգոր Շղթայակրի պատմական մեծ հիշատակարանը» (693—698)։

«Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին» գրքի ոլորտին վերաբերում

են այս ժողովածուի երկու հոդված. «Կոստանդին Դրազասի փախստյան զրույցը հայ ժամանակակիցների մոտ» (429—440) և «Գեորգ Յրանցեսի Փրոնիկոնի հայերեն անտիպ թարգմանությունը» (441—448)։ առաջինը գրվել է 1952 թ., սակայն ճշմարտագույն հանդեսում տպագրվել է միայն 1984 թ., այդ պատճառով էլ հայաստանցի ընթերցողին սակավ մատչելի էր, իսկ երկրորդը 1956-ին տպված՝ Անասյանի գլուխներից մեկն է։ «Յեցորայի ճակատամարտի (1620 թ.) և հոտինի պատերազմի (1621 թ.) արձագանքները հայկական աղբյուրներում» հոդվածը (633—647), որ վերաբերում է Անասյանի մյուս՝ «Յոհաննէս Կամենացի, Պատմութիւն պատերազմին հոթինու» գրքի շրջագծին, մինչև այժմ հայտնի էր մկրտաված ուսանող տարբերակով (տպ.՝ 1954 թ.), իսկ այստեղ ներկայացված է հայերեն ամբողջական բնագրով։

Մեր պատմագիտության քիչ մշակված մի բնագավառին՝ տոհմաբանությանը վերաբերող ըստ ամենայնի արժեքավոր հրապարակում է «Ազուլիսի հիշատակարանը և Տեր-Մկրտչյա - ների ազգաբանությունը» (841—855), որ քաղված է հնատիպ Սաղմոսարանի (Վենետիկ, 1748) Երևանի համալսարանի գրադարանի մի օրինակի մեջ ավելացված թերթերի վրա արված գրառումներից և վերարտադրում է Ազուլիսի XIX դարի պատմության ուղագրով դրվագներ, նաև՝ Տեր-Մկրտչյան տոհմի շուրջ սերնդի՝ ծննդաբանությունն ու տոհմածառը։ Այս փաստը մեզ պետք է հուշի հետևյալ կարևոր և անհետաձգելի անելիքը. այսօր արդեն ձեռքի տակ ունենք հայ հնատիպ գրքի հնարավոր շահով կատարյալ, խնամքով ու ձեռնահասությամբ պատրաստված մատենագիտությունը, իսկ այժմ պարտավոր ենք շրջել առաջին հերթին գլուխգցուղ, տեսություն, թերթի առ թերթ ուսումնասիրել պատահականության քմահաճույքին ենթակա բոլոր այն հնատիպ և հին գրքերը, որոնք ցրված են անհատ մարդկանց տներում, գլուղական եկեղեցիներում և մատուռներում, քաղել նրանց մեջ առկա բոլոր հիշատակարանային ու ծննդաբանական գրառումները և սկսել դրանց ուսումնասիրում-հրապարակումը։ Մեր գիտական հաստատություններից՝ որևէ մեկը (զուցե հենց Մատենադարանը) պարտավոր է ստանձնել այս գործի կազմակերպումը, քանզի հապաղում կարող է նորանոր կորուստներ պատճառել։

Ձուտ պատմագիտական հաջորդ աշխատությունները վերաբերում են կրկին Անասյանի շանքերով հանրահայտ դարձած Ստեփանոս Ասլմաստեցի կաթողիկոսին (1545—1567)։

«Գիտություններ Ստեփանոս Սալմաստեցու կենսագրության վերաբերյալ» (449—468) և «Ստեփանոս Սալմաստեցի (Հատվածներ նոր ուսումնասիրությունից» (469—491)։ Հայտնի է, թե մեր աղատադրական շարժման այս զինվորի կյանքի ու գործի որքան կնճռոտ կետեր էլ յուսարանել է. Անասյանը, երկրորդ հոգվածը պատրաստելու օրերին՝ 1980 թ. նա անդեկացրել է. «Մենք դրում ենք Ստեփանոս Սալմաստեցուն նվիրված Համապարփակ մի ուսումնասիրություն» (էջ 470)։ Դժվար չէ ենթադրել, որ դա պետք է արժեքով հեռու լիներ հեղինակի «XVII դար» կոթողային գործից. մեզ հայտնի չէ, թե արդյոք Անասյանն ավարտե՞լ է այդ «Համապարփակ ուսումնասիրությունը», կամ այժմ ո՞ր են նրա պատրաստի մասերը, սեպտիկ նշումներն ու դրամները, սակայն անկասկած է, որ սրա շարունակումն ու Հրապարակումը ես մեր պատմագիտության կարևոր անելիքներից է։

Նոր գիտնականը նպատակադրվում է կազմելու ազդային դրականության Համապարփակ հանրագիտական բառարան (Մատենադիտություն), անտիպ է երբեմն դժվար հասկանալի նյութերի շատ է հանդիպում. ամեն այսպիսի դեպքում խորասուզվելու հակում ունեցող հետազոտողի համար սկսվում է մտքի տառապանքի մի տեսական շրջան, որ մեծ մասամբ ավարտվում է հայտնագործությամբ, անգամ՝ գյուտով։ Ներկա հատորի մեջ այդպիսի հայտնագործությունները բավական շատ են. «Արիստոտելի երկերի հայերեն թարգմանությունները (Ղուկաս վրդ. Խարբերդցու թարգմանություններից» (319—345), «Գրական նբմունքներ Գրիգոր Շղթյակիրից» (երկու հոգված՝ 675—691), «Սալաթ-Նովայի թուրքերեն մի նորահայտ տաղը» (735—737), «Անծանոթ հեղինակ Թովմաս Աղուլեցին և նրա նորագյուտ երկը (Ժէ/ԺԸ դար)» (739—753), «Թովմաս Աղուլեցին և նրա մեղեդիները» (755—760), «Մի նորահայտ մեղեդիները» (761—763), «Նոր նյութեր վենետիկի Մխիթարյանների հնագույն թարգմանությունների վերաբերյալ» (765—794), «Միջնադարյան մի անծանոթ տաղ թուրքերեն լեզվով» (813—815), «ԺԸ դարում գրված հայատառ թուրքերեն բժշկարաններ» (817—828)։

«Մանր Երկերի» շարքում կան նաև հեղինակի «Հայկական մատենագիտությանը պատշաճող փոքրիկ հոգվածներ. մի քանիսը վերաբերում են մատենագիտության շտապած մասերին. «Մահմեդականությունը և քրիստոնյա հարակտությունը Ա. Մահմեդի դաշնագիրը, Բ.

Ալիի հրովարտված» (627—632), «Դավիթ Կիպրացի» (649—650), «Սալաթ-Նովայի տաղերը (մատենագիտական տեսություն)» և «Սալաթ-Նովայի հայերեն տաղերի երաժշտական հրատարակությունները» (699—733), «Հույն գիտնական Եվստրատիոս Արզենտեցու և հայերը» (835—839)։ Սրանցից մի քանիսն էլ հոգվածների տեսքով, զանազան առիթներով տպագրվել են տարբեր պարբերականներում, սակայն կրկնում են տպված հատորների նյութեր. «Հայաղղի պատրիարք Արսեն Երուսաղեմացի» (351—353), «Տոմարագետ Ազարիա Զուղայեցիներ» (651—666), Հայերեն թվարանական դասագրքերի պատմության համար — «Արհեստ համարողութան» եւ «Արթիմատիկայ» (671—674), «Ավետիք Բաղդասարյան Տիգրանակերտցու աշխատությունները» (829—834)։ Կարծում ենք, որ գիրքը կազմելիս վերջիններիս փոխարեն կարելի էր հատորի մեջ դնել այն գործերը, որոնք, առանց որևէ բացատրություն-ծանոթության, չեն վերահրատարակվել. «Զեյ և ուրբաթագեյ» (ՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1969, № 3, էջ 78—81), «Վարդան Այգեկցին որպես համերաշխության զաղափարախոս» («Էջմիածին», 1969, է—Ը, էջ 52—58), «Նորագույն քննադատությունը Հրանտ Ասատուրի մասին» («Բազմավեպ», 1980, էջ 278—289)։

Գիտնական-քաղաքացու ընդգծված բնութագիր ունեցող Անասյանը չէր կարող անտարբեր լինել իր գործընկերների աշխատանքի արդյունքների նկատմամբ, այս պատճառով էլ նրա աշխատությունների մեջ գրախոսությունները զգալիորեն շատ են։ Սակայն նա գրախոսում էր ոչ ամեն ինչ և ոչ գովերգելու կամ վատարանելու համար. գնահատում և ներկայացնում էր այն գրքերն ու հարցերը, որոնց վերաբերյալ ասելիք, ավելացնելիք, ճշգրտելիք ունեւր Այս հայեցակետով հիմնավորապես քննադատել է Արմենակ Սալմասյանի «Հայաստանյան մատենագիտությունը» (857—875), նույն եղանակով, տասնյակ ճշգրտումներ անելով, 1953 թ. զրախոսել է «Բուզանդարանի ուսերեն թարգմանությունը և պարզել նրա մի նախադասության իմաստը» (355—378), բայտ ամենայնի բարձր գնահատելով, ձեռնահատորեն վերլուծելով և մեկնարանման սեփական տևականները ներկայացնելով, արժեքավորել է Գ. Խ. Սարգսյանի «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը» (Երևան, 1965) գիրքը (379—392), Աս. Մնացականյանի «Աղվանից աշխարհի դրականության հարցերի չուրջը» (Երևան, 1966)՝ «Նոր հայացք աղվա-

նագիտության բնագավառում (393—413). ուղղակիորեն սրան են առնչվում նաև «Նորից աղվանական այրուքների հարցը» նամակը (415—418) և Բ. Ուլարայանի «Խաչենի իշխանությունը X—XVI դարերում» (Երևան, 1975) գրքի գրախոսությունը՝ «Դեպի Արցախ-Խաչենի պատմության խորքերը» (419—428):

Հայրենասեր քաղաքացու դիմագիծն ավելի հստակ է գծվել մի այլ հոդվածում, որ թվագրված է. «Հոկտեմբեր-նոյեմբեր 1943 թ., Բոլզրադ (Ռումինիա), Ռազմագերիների կայան 8», իսկ խորագրված է՝ «Ոչ թե Բմինովիչ, այլ՝ էմինովիչ (պրոֆ. Յորգայի տեսակետի ժխտումը)» (795—805): Սա կարգալուց հետո կարելի է հասկանալ, որ «Սովետական գրականություն» ամսագրում (1961, № 2) տրված հոդված «Միքայել էմինովիչի ստեղծագործության սոցիալական արժեքը և նրա կապերը հայ գրականության հետ» հոդվածը միայն համառոտված և թույլատրելի դարձված փշրանքն էր 1943-ին գրած ուսումնասիրության: Պարզվում է նաև, թե ինչու այդ համառոտված հոդվածը (807—811) վերահրատարակելիս Անասյանը պարտավոր էր ծանոթագրել. «Սույն հոդվածը հրատարակելիս (1961 թ.)՝ մենք այդ ժամանակներին հատուկ մտահոգություններով, հարկադրված էինք անհիշատակ թողնել Հ. Ժ. Սիրունու անունն ու այդ բնագավառում նրա կատարած աշխատանքները» (էջ 807): Հ. Սիրունին 1943 թ. սեպտ. 24-ին, իր տիկնոջ հետ Բոլզրադի ռազմագերիների կայանում այցելելով Անասյանին, «ենվեր էր բերել իր արժեքավոր «Միքայել էմինովիչ» (Ռուսարեստ, 1939) հատորը: Սա էլ դարձել է շարժառիթ Անասյանի, որ «անցյալում միայն անբավական ծանոթություն ուներ էմինովիչի մասին», որպեսզի ձեռնարկի մի ուսումնասիրության, սրա մեջ էլ օգտագործի ռուսերենի («հատկապես՝ հարավային») նախաշնչող վանկի Ե-ի X արտաբերվելու հնչյունաբանական օրենքը և ցույց տա, որ ծագումով արաբական էմին բառից առաջացած անունից (գործածական էր հայերի ու թուրքերի մեջ) ածանցված էմինովիչ ազգանունը ռուսացած հայոց միջավայրում հնչում էր Բմինովիչ և որ նույն էմինովիչ ազգանունը ռումինացի հրատարակչի քմահաճությամբ դարձել է էմինսկու («իչենք», որ Անասյանը Հայաստան ներգաղթել և ռուսերենին ծանոթանալու առիթն ունեցել էր միայն 1936 թ.): Եվ այսպես, ցույց տալով, որ «ռումինացի հայագետի մեջ հաղթել էր մեծ ռումինացին», Անասյանը ժխտում է ն. Յորգայի տեսակետը, թե էմինսկուն ծագումով հաջ չէր, այլև՝ բերում է նույն Յորգայի՝

Հ. Սիրունու ուղղված նամակից մի քաղվածք. «Բայց ընդ մեջ հայ ժողովուրդին մշտապես միայն, նույնիսկ առանց նկատի առնելու այն սերտ հարաբերությունները, զորս ան ունեցավ մեր (ռումինացի—Գ. Տ.—Վ.) ժողովուրդին հետ, և մտախնայուն էմինսկուի՝ անշուշտ որ հանգիստություն մը կա: Թըրծուած ո՛վ գիտե զեպի Արևելք ձգտող ինչ առհավական ներշնչումներով,— զորս իր կազմությանը մեջ ունի այնքան բարձր էմինսկուի,— խորհող մըն է ան՝ միտքը ուղղված զեպի լայն հորիզոններ և զեպի խորհրդավոր արշալույսներ: Միևնույն հատկանշական դրոշմին տակ է բովանդակ հայ գրականությունը, ըլլա Կովկասյան ստորոտի հին հայրենիքին, ըլլա Փոքր Ասիոյ փոխադրվալ հայրենիքին մեջ, այն Կիլիկիոյ, զոր այս պահուս ազգայնական Թուրքիոյ ընծա տված է Յրանսան՝ Թեև հոգատարն էր միայն անոր: Այսպես, կապ մը կա հայերուն,— ինչ լեզու ալ խոսին այսօր,— և էմինսկուի բանաստեղծության միջև» (էջ 804):

Այս նպյն ելախնտալին իրողությունն է գրվել Անասյանի մի այլ՝ գիտահրապարակախոսական հոդվածի («Օտար լեզվով արտահայտվող հայ գրողների մասին») մեջ ևս: «Նավասարդ» հանդեսի հարցազրույցի առիթով 1983 թ. սա գրվել է ամերիկահայ միջավայրում, ուր կա զգալի այլալեզու հայ գրականություն: Անասյանի իրավացիորեն հարցը համարում է ընդհանուր հայագիտական և ճշգրիտ եզրակացնում. «Մենք հայ գրականության պատմության մեջ պիտի ունենանք մեր հաշիվը, մեր հաշվառման սյունակը, և իմանանք, թե ո՛րն է մեր մուծած տուրքի կշիռը ուրիշ ժողովուրդների գրականությունների մեջ: Եթե այսպես է, ապա հասկանալի է, որ մեր օրերում օտար լեզուներով արտահայտվող հայագի գրողները, ինչպիսիք են Սարգյանն ու Շահինյանը, պիտի իրենց որոշ տեղը կամ անկյունն ունենան նալ գրականության պատմության մեջ, քանի որ լեզվով էլ դրելիս լինեն, չեն դադարում մեր արմատների պտուղները լինելուց, մեք ձեռքով արժեքներ և արժանիքներ ցերեկայացուցիչներ լինելուց քամամարդկային մեղկույթի անդառնում» (էջ 914. ընդգծումը մերն է—Գ. Տ.—Վ.): Հ. Անասյանը ճշգրիտ և ողջամիտ պատասխան է տվել նաև հարցազրույցի հաշորդ՝ «Արևելահայերեն և արևմտահայերեն» հարցին. Կալիֆորնիայում՝ հայության արևմտյան ու արևելյան հատվածների քանակական հավասարակշռության պայմաններում սկսել էր «մայրերի վրայ խմորվել մի նոր «սփյուռքահա-

լերեն», որ բատերը փորձում էին համարել ապագա «միասնական հայերենի» սկիզբը: Անասյանն անիմաստ և վտանգավոր է դիտել «հայկական դպրության պաշտոնական դարպասից» այս նոր «խառնահայերենը» ներս հրավիրելը, «հյուրընկալել մեր մամուլի էջերում և համապատիվ դարձնել մեր դրական ղույզ լեզուներին» (էջ 916): Իրավացին համարում է «համատեղում և դուլկացություն»-ը, անթույլատրելի գանգառություն անվանում դրական լեզուներից որե՛կ մեկը ստորագասելը, մեկի շահահնչներով ու քերականական ձևերով մյուսը սրբազրելը և այլն:

Նույն ողջամտությունը ցայտուն դրսևորված է նաև հաջորդ «Անհեթեթ լեզվաբանություն» հոդվածում (919—924), որի մեջ հայագետը դատապարտել է արևելահայերենի նկատմամբ եղած ուսնձգությունները, մեր լեզվի զրական տարբերակներն ու նրանց կրողներին իրար դեմ հանելու փորձերը: Անասյանի գիտական հրապարակախոսությունը նրա հետազոտական ժառանգության շարունակությունն է. «Սահմանել հայ մշակույթի օր», «Հորեկյանական ելույթ (Իմ 80-ամյակի առթիվ)», «Զորավար Անդրանիկ», «Բաց նամակ պ. Գևորգ Արելյանին», «Ելույթ մեծ եղեռնի 70-ամյակի առթիվ», «Հրատարակել առանց թարգմանելու» (879—895, 901—902):

Կարծում ենք՝ լավ, ոչ հավելվածային մասում պակաս էր տեղադրել հեղինակի գիտական երախայրերը՝ «Արևմտահայերենի «ինքզինք» գերանվան մասին», որի, ի դեպ, իր մեծ ուսուցիչ հ. Արսեն Ղադիկյանի քերականական մի գրույթի շտկումն է: Նույնպես՝ զրախոսությունների մեջ պետք էր դնել նաև «Շտապ գրված մի գրախոսության մասին» հոդվածը (897—900), որ պատասխան է իր հրատարակած՝ «Ցուզհաննէս Կամենացի, Պատմություն պատերազմին Խոթինու» աղբյուրի մասին Ցա. Դաշկևիչի գրած գրախոսության: Իսկ «Պրն. Ժ.—Պ. Մահի հայագիտական աշխատանքների մասին» (347—349) նամակը պետք էր տպագրել հենց հավելվածի մասում:

2. Անասյանի կյանքի հիմնական և, ցավոք, անավարտ ունացած գործի մասին այստեղ լիարժեք արդարացված չէր լինի: Հայտնի է, որ «Հայկական մատենագիտության» Բ հատորի մեջ տպագրելու համար ներկայացված ձեռագրի մի մասը չի չարվել և դուրս է մնացել հատորից. սրա հետ կային նաև անվանացանկեր, որոնց մեջ նշանակված են Ա հատորի մեջ եղած անուններն ու էջահամարները. հեղինակը ծրագրել էր դրան ավելացնել նաև Բ հատորի տվյալները: Հիմա այս ամ-

րոգչի ժառանգն է դարձել Մաշտոցի անվան Մատենադարանը, ուր գործը շարունակվում է և, անկասկած, հեղինակի հրահանգների ճշգրիտ պահպանումով, կհասցվի հաջող ավարտի և լույսընծայման: Այսպիսով, մոտ ապագայում ստանալու ենք «Հայկական մատենագիտության» Գ՝ 6-րդ նախորդների նման ծավալուն հատորը, որի վերջին բառահոգվածն է «Գուլիելմոս Կոստանդնուպոլսեցի» և որը պետք է ունենա ընդարձակ և կատարյալ անվանացանկեր:

Սակայն հայտնի է նաև, որ Անասյանն իր աշխատանքն անում էր երկու փուլով՝ ա. անտիպ ու տպագիր նյութերի ժողովում և քարտագրում, բ. հավաքված նյութերի հետազոտում և շարադրում: Զեռագիր ու տպագիր որևէ գիրք կարգալիս քարտագրում էր ամբողջը՝ Ա—Ֆ գրերով սկսվող բոլոր անունների և երևույթների մասին համառոտ և ընդարձակ նշումներով ու նշանակումներով: Այսինքն՝ աշխատանքի առաջին աստիճանի տեսքով և գերհամառոտ քարտային նշումներով գոյություն ունի մատենագիտության շարունակությունը, որի ժառանգորդը նույնպես Մատենադարանն է: Հեղինակը Մատենադարանի ղեկավարությանը խնդրել է գտնել ցանկություն ունեցող որևէ երիտասարդ և նրան հանձնարարել այդ աշխատանքի շարունակումը, որ կլինի իր ամենանվիրական իղձի իրականացումը: Նշանակում է այս վիթխարի գործի համար պետք է պատրաստել մի նոր նվիրյալ, որ իր մարդկային հատկանիշներով ու պատրաստությամբ հնարավոր չափով մոտ լինի Անասյանին: Հարկավոր կլինի նաև տեական գործուղումների և այլ եղանակներով նրան օժտել հին, արևելյան և եվրոպական լեզուների բավարար իմացությամբ, ալլապես՝ ցանկացած կիսատ-պըռատ շարունակումն անիմաստ է:

Նույն Մատենադարանի հանձնարարությամբ Անասյանը հրատարակության էր պատրաստում միջնագրյան մեր կարևոր աղբյուրներից մեկը, Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհածոգովը»՝ վաճառականության դասագիրքը, որ նույնպես անավարտ մնաց: Բավական աշխատանք կատարվել է. Մատենադարանի Դիվանական բաժնում գտնվող՝ Անասյանի թողած ծավալուն 7 թղթապանակներից 2-ում այս կիսատ գործի նյութերն են, մի մեծ քարտարանի տեսքով էլ՝ Կոստանդ Ջուղայեցու գործածած բոլոր եզրերի և օտար բառերի մեկնությունները: Որևէ մեկը պետք է շարունակի, ավարտի հասցնի նաև այս արժեքավոր գործը, որ նախատեսված է Մատենադարանի սկսած մի կարևոր մատենաշարի՝ «Հայ տնտեսական պատ-

մասթյան փաստաթղթերի՝ համար (ինչ խոսք, որ այս մեկն ավելի դյուրին խնդիր է, քան Մատենագիտությունը)։

Անասյանի թողոնի մեջ (թղթ. 1, վավ. 1) կա անավարտ մի աշխատություն ևս. (1724 թ. Երևանի ինքնապաշտպանությունը՝ (շարադրանք և նյութեր)։ Սա պատրաստված է բավական վաղուց. և այսօր պետք է պարզել, թե ի՞նչ վերաբերմունքի է այն արժանի՝ շարունակելի՞ է, թե՞՝ ապագա ուսումնասիրողների համար մնալու է իբրև օժանդակ նյութ։ Անասյանի ժառանգության հետ կապված նկատառելի մի անպատեհություն կա. նրա անձնական ընտանեկան դիվանը լուս Անջելեսում է, իսկ Հայաստանում եղածը ցրված է երեք տեղ՝ Մատենադարանում, Գրական թանգարանում և էջմիածնի Մայր աթոռում։ Տարբեր տեղեր ընկած առանձին նշումներ կարող են վերաբերել բոլորովին ուրիշ տեղ գտնվող հիմնական գործին, ուստի և նրա որևէ երկասիրության (հատկապես՝ Մատենագիտության) շարունակողը պետք է ծանոթանա բոլոր տեղերում եղած ամենափոքր նշումներին ևս։

Այսպիսով տեսանք, թե հայ միջնադարագիտությանն ինչպիսի արդյունքներ ու հեռանկարներ է տալիս Չ. Անասյանի հոգվածների մեկտեղումը, առավել ևս՝ ինչպիսի խնդիրներ են առաջադրում նրա անավարտ ու անտիպ գործերը։ Ներկա շարադրանքի ընթացքում արեցիք զբոս կազմությանն ու նյութերի դասավորությանը վերաբերող աննշան նկատումներ։ Այդուամենայնիվ, ավանդույթը չենք խախտում և կամենում ենք այս գրախոսությունն էլ ավարտել դիտողությամբ, որ, սակայն, ուղղված է ոչ թե հեղինակին ու նրա գրքի մեկնասաններին, այլ մեզ։

Պարբերականներում ցրված բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ, համարյա ավարտած կամ թերի անտիպներ թողնելով, 1982-ին ցավալիորեն վաղաժամ վախճանվեց ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը. Ճիշտ նույնպիսի ժառանգություն թողնելով, մի տարի անց մահացավ անվանի բանասեր Ասատուր Մնացականյանը, ապա՝ ոչ պակաս երախտաշատ աղբյուրագետ Վաղգեն Հակոբյանը և էլի ուրիշներ, որոնց անունների պարզ թվարկումն իսկ րավարար կլիներ մեր կորստի չափը պատկերացնելու համար։ Եթե մեր պայմաններում անիրականանալի, նույնիսկ՝ անիմաստ է ալեբրիկյան սովորույթի համեմատ հսկա հատորների մեջ Խաչիկյանի, Մնացականյանի և մյուսների բոլոր ցրված հոգվածներն ամփոփելը, ապա 1982-ից և 1983-ից մինչև հիմա պետք է կարողացած լինեինք տպագրել հայագիտության այդ երախտաշատ մշակների սովորական չափի գոնե երկու-երեքական հատոր։ Պարտավոր ենք ծրագրված և առավել նպատակաւաց եղանակներով հրատարակել հեռավոր և մոտավոր անցյալի բեղուն հայագետների հոգվածային ժառանգության հատորաշարերը, որովհետև գիտական պարբերականները, որքան էլ լավ մատենագիտություններ ունենան, ավելի սակավ գործածական են, քան կարող են լինել ժողովածուները, հատկապես եթե սրանք օժտված լինեն Չ. Անասյանի «Մանրկերպեր» հատորի ունեցած «Հատուկ անունների և առարկաների» (931—964), նաև՝ «Պարբերականների և բառարանատիպ հրատարակությունների» (965—967) մանրամասն ցանկերով։

Գ. Հ. ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՌԱՔԵՆԻ ԴԱԻՐԻՓԵՑԻ, ԳԻՐԴ ԿԱՄԱՌԱՐԵԱՆԵՐ, աշխատասիրություն մ. Լ. Ա. Խանլարյանի, ՀԳԱ հրատարակչություն, Երևան, 1990, 592 էջ։

Ցուրաքանչյուր ազգ իրավամբ կարող է հպարտանալ այնպիսի մեծությամբ, ինչպիսին է Առաքել Դավրիժեցին՝ ուշ միջնադարի հայ պատմագրության ամենաակնառու դեմքը, որի հրկը՝ «Կատմությունը» (կամ «Գիրք պատմությանը»)՝, իբրև մեծարժեք պատմական

սկզբնաղբյուր Հայաստանի և մի շարք այլ երկրների պատմության ուսումնասիրման համար, բարձր է գնահատվել հայագիտության, նաև արևելագիտության մեջ։

Մինչև XX դարի սկիզբը այն ունեցել է երեք հրատարակություն (1660՝ Ամստերդամ, 1834 և 1896՝ Վաղարշապատ), և յուրաքանչյուր անգամ տպագրությունից շատ շանցած գրքի օրինակները վերածվել են մատենագիտական հազվագյուտ նմուշների (հայտնի է, թե ինչ դժվարությամբ է հաջողվել գտնել այդ

լ Կարծում ենք, Դավրիժեցու երկի մի քանի անվանումներից նախապատվությունը պետք է տալ ձեռագրերում առավել հաճախ հանդիպող և ավելի հակիրճ «Կատմությունը» վերնագրին։